Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025 թվականի մայիսի 6-ից 7-ը քաղաք Թեհրան (Իրանի Իսլամական Հանրապետության) այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Էդուարդ Հակոբյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իրանի Իսլամական Հանրապետություն, ք. Թեհրան, 2025թ. մայիսի 6-ից 7-ը:

3. Հրավիրող կողմը՝

Հրավերը ստացվել է Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսական հարցերի և ֆինանսների փոխնախարար, մաքսային ծառայության ղեկավարի կողմից:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման հիմնական նպատակն էր երկու երկրների միջև միջսահմանային առևտրային հոսքերի և հսկողական գործընթացների դյուրացման նպատակով երկկողմ համագործակցության շրջանակների ընդլայնումը, հայ-իրանական սահմանային անցակետերում մաքսային ստորաբաժանումների միջև համակարգված և կայուն փոխգործակցության ամրապնդումը՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղաշարժի դյուրացման, մաքսային հսկողության գործառնությունների պարզեցման և թափանցիկության ապահովման նպատակներով:

5. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների մաքսային ծառայությունների միջև նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի նախագծման և լիարժեք ներդրման վերաբերյալ հարցը, հայ-իրանական սահմանին «Պարզեցված մաքսային միջանցքի»

ներդրման հայեցակարգը՝ որպես մաքսային հսկողական գործընթացների դյուրացմանը, ապրանքների արագ և անխոչընդոտ տեղափոխմանը և բացթողնման գործընթացների արագացմանը միտված նորարարական մոտեցում: Անդրադարձ է կատարվել նաև լիազորված տնտեսական օպերատորների փոխադարձ ճանաչման հնարավորություններին և մեխանիզմներին, փոխադարձ պատրաստակամություն է հայտնվել այս ուղղությամբ առարկայական բանակցություններ սկսելու և համապատասխան միջազգային փաստաթուղթ ստորագրելու մասով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև մաքսային համագործակցության գործառնական, տեխնիկական և լոգիստիկ բնույթի այլ հարցեր, այդ թվում՝ սահմանային ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել ներդնելու համատեղ ջանքերը՝ բեռների տեղափոխման գործընթացներն առավել արագ և դյուրին իրականացնելու ուղղությամբ, այդ թվում՝ բեռնատարների սպասարկման թողունակությունը բարձրացնելու առումով՝ հաշվի առնելով Ագարակ սահմանային անցման կետի ընթացիկ վերակառուցումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեղի է ունեցել հանդիպում ՀՀ ՊԵԿ նախագահի և Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսական հարցերի և ֆինանսների փոխնախարար, մաքսային ծառայության ղեկավարի Ֆորուդ Ասգարիի միջև:

Քննարկված հարցերն արդեն իսկ ներկայացված են 5-րդ կետի շրջանակում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ժամանակ ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝

Կողմերը վերահաստատել են մաքսային ստորաբաժանումների միջև փոխգործակցության խորացման, սահմանային գործընթացների թափանցիկության և արդյունավետության բարձրացման ուղղությամբ համատեղ գործողությունների կարևորությունը: Դրանք միտված են

մաքսային ընթացակարգերի պարզեցմանը և ապրանքների բացթողնման ժամանակի կրճատմանը :

Կողմերը պայմանավորվել են նաև նախաձեռնել նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի փորձնական ներդրման գործընթաց՝ միաժամանակ ստեղծելով տեխնիկական հարցերով համատեղ աշխատանքային խումբ՝ համակարգի տեխնիկական, գործառնական բնույթի հարցերի քննարկման և տեղեկատվական անվտանգության բաղադրիչների մշակման նպատակով:

Իրանական կողմից ներկայացված «Պարզեցված մաքսային միջանցք» հայեցակարգի ներդրման շրջանակներում կողմերը համաձայնության են եկել սկսել մասնագիտական քննարկումներ և ստեղծել համապատասխան աշխատանքային խումբ՝ նախաձեռնության գործնական կիրառման ուղիների մշակման և հստակեցման,ծրագրի առաջմղման նպատակով:

Լիազորված տնտեսական օպերատորների (ԼՏՕ) փոխճանաչման գործընթացի մեկնարկի շրջանակներում կողմերը հաստատել են փոխադարձ պատրաստակամություն՝ նախաձեռնելու մասնագիտական բանակցություններ՝ համապատասխան միջազգային փաստաթղթի մշակման ուղղությամբ:

Կողմերը քննարկել են նաև սահմանային ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման համակարգերի արդիականացման անհրաժեշտության վերաբերյալ հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել վերոնշյալ ուղղություններով ձևավորել համատեղ առաջարկություններ և իրականացնել համաժամանակյա քայլեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ-ի կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում հարևան պետությունների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցությունը, ոլորտային քննարկումների անցկացումը և դրանց արդյունքում անհրաժեշտ պայմանավորվածությունների ձեռքբերումը: Իրանի Իսլամական Հանրապետություն այցը հնարավորություն տվեց քննարկելու լուծումներ պահանջող ակտուալ հարցերի լայն շրջանակ և ձեռք բերել մի շարք

պայմանավորվածություններ՝ միտված մաքսային վարչարարության բարելավման միջոցով անհրաժեշտ մեթոդների և գործիքների կիրառմանը:

Հանդիպման արդյունքնում ձեռք բերված պայմանավորվածությունները արձանագրվել և ստորագրվել են երկու կողմերի միջև, որոնց մասով կամրագրվեն նաև գործողությունների հստակ ժամկետներ՝ ըստ պատասխանատուների:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Էդուարդ Հակոբյան

12.05.2025թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **334-Ա, 381-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Իրանի Իսլամական Հանրապետություն՝ քաղաք Թեհրան**
5. Գործուղման ժամկետները՝ **06.05.2025-07.05.2025թթ.**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Էդուարդ Հակոբյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	184,275.00	**184.28**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 59.40	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	23,098.28	
	Օրերի քանակը	1	
	Ընդամենը (դրամ)	23,098.00	**23.10**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 51.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	19,831.86	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	39,663.00	**39.66**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**247.04**	**247.04**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ 13.05.2025թ.